


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄՃՃ.
Վերականգնող Կ. Պոլսոյ հմր. 10 ՄՃՃ.
Վերականգնող Կ. Պոլսոյ հմր. 4 ՄՃՃ.
Վերականգնող Կ. Պոլսոյ հմր. 3 ՄՃՃ.
Մանուկան տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար գաւա տակարարութիւն կըլ-
լայ :



ՊԱՅՄԱՆՔ

Դուրս դադար լրացող ծանրու-
ծաբար խորագրութեան վրայ է :
Լրացողս վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ դրամ խնայողի
— Տնարկնիս պիտի ուղղուի : Դաւա-
թիւն Սանտրոքըրար Հաստիսի թիւ
198 : Կորո խան : Մասիսի դրամն
եւսիլ :
Հանգու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուի :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գանի մ'օրէ 'ի վեր պաշտօնական
հեռագրաց լուրերն պատճառաւ պա-
տերազմական լուրերը նորէն կը պակ-
սին : Երկու օր առաջ Սիւլէյման փա-
շայի մէկ հեռագրալուրը կը ծանու-
ցանէր թէ Շիրքայի կիրճին մէջ Ս.
Նիքօր լեռան ամրութիւնը դարձեալ
Ռուսաց ձեռքն անցեր է : Սիւլէյման
փաշա երեք կողմէ յարձակում սկը-
սած էր յիշեալ ամրութեան վրայ :
Իւր զօրաց միջին գունդը Ս. Նիքօ-
րայի ամրութիւնները գրաւեր և վեց-
ուկէս ժամ պահեր է զայն Ռուսաց
կատաղի յարձակմանց դէմ, բայց ա-
նոր երկու կողմը պաշտպանելու պաշ-
տօն ունեցող միւս երկու գունդերը
չեն կրցեր ժամանակին հասնիլ, և
Ռուսաց ալ շատ օգնութիւն գալով
յարձակումն ամենայն սաստկութեամբ
վերանորոգել են, հետեւաբար Օսման-
եան զօրքը պարտաւորուել է Ս. Նի-
քօրայի բարձունքը թողլով իւր նախ-
կին դերքերը վերադառնալ : Անկէց
'ի վեր Շիրքայի կողմը կարեւոր դէպք
մը չէ պատահած, թէև Սիւլէյման
փաշա կը յուսար որ ընդ հուպ պի-
տի կարենար նորէն գրաւել Ս. Նիքօ-
րայի ամրութիւնը :

Բլէֆլայի կողմն Օսման փաշայի
վերջին հեռագրէն ետև պաշտօնա-
կան նոր լուր մը չկայ, բայց վիշն-
նայի վրայէն եկած հեռագրալուրեր
կը ծանուցանեն եղբր թէ Ռուսք կի-
րակի օրը նորէն Բլէֆլայի վրայ յար-
ձակել և շատ կորուստ տուել են :
Այս մասին պաշտօնական ստոյգ լու-
րերու սպասել հարկ կըլլայ՝ առանց
հաւատ ընծայելու այլ և այլ զրուցայ
որք երկու օրէ 'ի վեր հրապարակիս
վրայ կը պտտին : Օսման փաշային
հեռագրին իմաց կուտար թէ Ռուսք
Բլէֆլայի ամեն կողմը պաշարելու
փորձ կընեն, ուստի կայսերական կա-
ռավարութիւնը փութաց օգնութիւն
ըրկել : Ֆէրիք Շէֆքէթ փաշան բա-
ւական զօրքով արդէն Օրխանլիէ հա-
տած է, և կըսուի թէ անկէ ալ Բլէֆ-
լայ դնացած է : Եթէ Շէֆքէթ փաշա
յաջողած է Բլէֆլայ մտնել, կամ Ռու-
սաց պաշարումը կատարեալ ըլլալու
չէ, կամ Շէֆքէթ փաշա պաշարման
դիժերը խցելով անցած է. այս եր-
կուքն ալ Օսմանեան զինուոց համար
յաջողութեան նշան կընան համար-
ուի :

Մէհմէտ Ալի փաշայէն ալ հեռա-
գիր չկայ հրատարակուած. այսու
ամենայնիւ կըսուի թէ յառաջխաղա-
ցութիւնը կը շարունակէ, և Ռուսե-
րը Գարա Լոմ գետին հովտէն մինչև
Խանթրա գետին անդին վտանգե-
տու : Կըսուի թէ Պիէլան ալ աւել-
ի և Զիշթովայի կ'սպառնայ. բայց

այս լուրերը կընան կանխահաս ըլլալ
վիշննայէն հեռագրի մը կը ծանու-
ցանէ թէ Ռուսաց թաղաժառանգ-
Մեծ դուքսն իւր բանակակերպը
Զիշթով փոխադրած է, ուր կայսրն ալ
պիտի երթայ եղբր : Եթէ այս լուրն
ստոյգ է, ծանր ձախողութեանց
նշան կընայ համարուի ոչ միայն Բլ-
լէֆլայի առջև, այլ և Խանթրայի կող-
մը, քանզի կայսեր և կայսրորդոյն
Զիշթով երթալը դէպի Ռուսմանիա
նահանջելու նախաշաւի կընայ հա-
մարուի : Կը պատմեն թէ կորչաքով
իշխանն հեռագիր մ'ատանալով սաս-
տիկ յուրուել և ներկայ գտնուողնե-
րէն միոյն "Մեր վիճակն անյոյս է"
ըսեր է. բայց Ռուսք կընային տակա-
ւին Բլէֆլայի մեծ հարուած մը տա-
լով՝ իրենց բոլոր ձախողութիւնները
ծածկել : Կարող եղա՞ն այս հարուա-
ծը տալու, տակաւին ստոյգ լուր
չկայ. այսու ամենայնիւ վիշննայէն
եկած հեռագրական լուրերուն նա-
յելով Ռուսք անյաջող ելել են, և
Բլէֆլայի մէջ Հոնդարացիք՝ որք 1848
ին իրենց յեղափոխութեան ժամա-
նակ Ռուսիոյ զինուորական միջամու-
թիւնը դեռ մուգած չեն, Բլէֆլայի
առջև Ռուսաց կրած նոր և մեծ պար-
տութեան վրայ լուսավորութիւններ
ու հանգէներ ըրեր են :

Ռուսաց հրամանատարներուն մին-
չև ցարդ գործած ուղղմանական
սխալմանց վրայ նոր սխալներ ալ բար-
դելն անհաւանական չթուի : Եւրո-
պական կարեւոր թերթեր և զինուո-
րական արհեստին ներհուն անձինք
Բլէֆլայի վրայ յարձակումն արդէն
սխալ մը կը համարեն, ինչպէս որ սխալ
մ'էր այնպիսի գիրք մ'ի սկզբանէ չը
գրուելը : Տէյլի Նիւզի թղթակցին
խօսքին նայելով, Բլէֆլայի նոր յար-
ձակման ձեռնարկող Ռուսական և
Ռուսիոյ զօրաց թիւն հարկը հաղար
էր. իսկ Օսման փաշայի բանակն ութ-
սուն հաղարի մետ կը կարծուէր, և
Շէֆքէթ փաշայի տարած վերջին օգ-
նութեամբ զօրութիւնները գրեթէ
կը հաւասարակուին, այս առաւել-
ութեամբ որ Օսմանցիք ամուր դիր-
քերու մէջ են, և Ռուսք անոց վրայ
կը յարձակին : Ռուսաց զօրավարնե-
րուն գործած սխալմանց մէկ հետե-
ւանքն ալ այս է, որ առանց իրենց
ամբողջ օգնութեանց հասնելուն ըս-
պասելու՝ պարտաւորեցան Բլէֆլայի
վրայ յարձակումը փութացնել. քան-
զի մէկ կողմէն Մէհմէտ Ալի փաշա
և միւս կողմէն Սիւլէյման փաշա զի-
րենք նեղը կը լծէին, և այս երկու
Օսմանեան զօրավարներուն մէկ մեծ
յաջողութիւնը կընար Ռուսաց բոլոր
յատակադիժը խանդարել և ահագին
ձախողութեանց պատճառ ըլլալ :
Ռուստի, ինչպէս ըսինք, Ռուսք անմի-
ջապէս Բլէֆլայի վրայ յարձակելու
հարկադրեցան, և իրենց պատերազ-
մական բոլոր բաղլըր դրեթէ այս յար-

ձակման վերջնական յաջողութեան
կամ ձախողութեան վրայ կայացած
է : Բայց որ և է պարագայի մէջ, իրենք
ալ պատերազմն 'ի մօտոյ վերջացնե-
լու անյոյս կերեկն, քանզի զինուո-
րական ճարտարագիտաց դուր թօս-
ըսէն զօրավարն հրաւիրուած է ձը-
մերուան բանակադրու յատակա-
գիծեր պատրաստելու : Այս բանա-
կեղծերը պիտի ըլլան եղբր Նիկոպո-
լիս, Զիշթովա, Մաչին և Հիւրչովա :
Ռուսիոյ Ռուսք ոչ միայն Պաքսաններն՝
այլ և թերմովա և բոլոր Պուլգարիս
պարպելով յետո նահանջելու և մի-
այն Դանուբի եղբրք քանի մը կէ-
տեր պահելու դիտաւորութիւն ու-
նին, եթէ մինչև ձմեռ չկրնան պա-
տերազմը յաջողութեամբ պսակել :
Այն ատեն ներկայ տարուան պատե-
տերազմը բոլորովին ընդունայն եղած
պիտի ըլլայ, և գարնան նորէն գործի
պիտի սկսուի : Այսպիսի արիւնհեղու-
թիւն, այսպիսի կոտորած, բոլորն ալ
անօգուտ և ապարդիւն պիտի ելնեն,
վասն զի Ռուսիա չուզեր իւր անկա-
րողութիւնը խոտովանիլ, և փորձ կը
կը փորձէ պատերազմը տարիներով
երկարաձգել, յուսալով թերեւս որ
այսպէս կրնայ իւր թշնամին յոգնե-
ցնել : և ինչ որ չկրցար յարձակման
կատարել, կրնայ կամ դեռ պահադի-
տութեամբ, կամ ժամանակին անա-
կընկալ պարագայներով ձեռք բե-
րել :

Չենք կը հասկնար թէ ի՞նչպէս
կրնայ Եւրոպա ներել այսպիսի քա-
ղաքականութիւն մը : Ահաւասիկ պա-
տերազմ մը՝ որոյ նմանը կրնանք ը-
սել թէ միջին դարերէն 'ի վեր տես-
նուած չէր : պատերազմ մը, որ Ռու-
սիոյ պատճառաւ ազգային և կրօնա-
կան ատելութեան, ջնջման և կոտո-
րածի կերպարանք առաւ : Ռուսիոյ
յայտարարութիւնները կրնին թէ
թուրքիոյ քրիստոնէից վիճակը բար-
ւորեցելու, Պուլգարիա ինքնօրէն և
ազատ ընելու նպատակաւ կը պատե-
րազմի : Նոյն իսկ սկզբնականութիւնը
խաչակրութիւն մ'էր, որուն իրաւը
ալ բնականաբար ճիշտ և զազա բա-
ւերովը պիտի պատասխանէին : Հե-
տեւաբար պատերազմին կրօնական և
ազգային ատելութիւնները բոլորեց-
լու պատասխանատուութիւնը բոլո-
րովին Ռուսիոյ վրայ կը լինայ : Բայց ի՞նչ
որ ալ ըլլայ յայտնի նպատակը, մին-
չև ցարդ Ռուսիա ցոյց տուաւ որ ինք
անկարող է զայն գործադրելու, և
միանգամ ևս հաստատուեցաւ որ թուր-
քիոյ քրիստոնէից վիճակը խաչակրու-
թեան պատերազմներով բարւոքել
անհնարին է, (թէ և ասոր փորձը հա-
ղար անգամ տեսնուած էր), նորէն
հաստատուեցաւ դարձեալ որ քրիս-
տոնէից վիճակն ոչ թէ խաչակրաց հե-
տեւութեամբ, թշնամութեամբ, զի-
րար ջարդելով կամ հալածելով կըր-
նայ բարւոքիլ, այլ անկեղծ հաշտու-

թեամբ, հաւատարիմ հայրենակցու-
թեամբ, և խաղաղական յառաջդի-
մութեամբ և բարենորոգմամբ. միով
բանիւ, քրիստոնէից վիճակն անկարե-
լի է բաժանեալ կերպիւ բարւոքել :
այլ թուրքիոյ ընդհանուր վիճակին
բարւոքմամբ կրնայ ձեռք բերուիլ :
Եւրոպա պէտք էր որ այս ճշմարտու-
թիւնը լուրջնկատողութեան առնելով
յանուն մարդկութեան յառաջ դար
և ըսէր Ռուսիոյ. դուք ձեր զօրու-
թեան վրայ վստահելով՝ հախառակ
մեր խորհրդոց և ազգաբարութեանց՝
պատերազմաւ միջամտեցիք թուրքիոյ
գործոց. մինչև ցարդ չկրցիք յաջո-
ղիլ, այսուհետեւ յաջողուաւ ալ հաս-
տատուն փաստ մը չունիք. ուստի
պէտք է ետ քաշուիք ձեր անխելի
ձեռնարկէն, և ըստ փարիզի դաշ-
նագրութեան՝ կամ նոր դաշնագրու-
թեամբ մը յարգէք թուրքիոյ անկա-
խութիւնն ու ամբողջութիւնը, և նիւ-
թապէս ապահովութիւն տաք անոր
և մեզի՝ թէ այսուհետեւ այսպիսի յար-
ձակումներ չպիտի ընէք և այսպիսի
արիւնհեղութեանց և կոտորածոց
պատճառ չպիտի ըլլաք :

Դժբաղդաբար, Եւրոպիոյ անկա-
րողութիւնն ալ, որով պատերազմին
առաջը չէր կրցած առնուի, տա-
կաւին կը շարունակէ, և կարծես ին-
քըզինք աւելի անկեղծ ցուցնելու հա-
մար՝ իւր բռնելիք ուղղութիւնը կը
կորուստնէ, և փոխանակ Ռուսիոյ յոր-
դոր տալու որպէս զի այս արիւնհեղ
պատերազմին վերջ տայ, անոր աղա-
չանքը կամ թերագրութեամբ՝ Բ.
Դրան ազգաբարութիւններ կ'ուղղ-
էս պաշտօնական թերթերու միջո-
ցաւ, Պիէրլինի իշխատակազմին և դեռ
պահապարհող առաջարկութիւննե-
րը դարձեալ մէջ կը բերէ, որք ար-
դէն մերժուած են, և ներկայ պա-
տերազմին անուղղակի պատճառ ե-
ղան : վերջապէս, Եւրոպա՝ առանց
տակաւին ուղղակի միջնորդութեան
կամ միջամտութեան սկսելու՝ այն-
պիսի չեղողութիւն մը կը պահէ, որ
ներկայ տագնապը կը ծանրացնէ, և
տեղի կուտայ մեզ իրոջ հետ թէ արդ-
եօք Եւրոպա աւելի լաւ չընէ՞ր որ
ընաւ չխառնուի Արևելից գործերուն,
թողու գոնէ առ այժմ որ Արևելից
վերականգնութիւնն ինքնաբերա-
բար կատարուի, և եթէ այս եղանա-
կըն ալ չյաջողի, այն ատեն պէտք է
զաժը խորհի :

Պիէրլինէն վիշննայի Նուվէլ Բուէս
Լիպու լրագրին գրուած նամակ մը
հետեւեալ ուշադրութեան արժանի
տեղեկութիւնը կուտայ Գերմանիոյ
արեւելեան քաղաքականութեան վը-
րայ :

« Օսմանեան յաղթութիւնը դրժ-
բաղդաբար մեր գլխաւոր անկում-
ներուն տեսութիւնները բնաւ չփո-
խեցին : Հոս առաջուան չափ՝ եթէ

րոյց վրայ կատարեալ համաձայնութիւն գոյացրէ Պիտարը իշխանին և Անտարասի կռիւն մէջ :

Փարիզ 21 սեպտ.

Կը հաւատեն թէ Անտարասի կոմսը Սայցուրիկի մէջ որ և է պայման կամխառնում յանձն չէ առեր, և թէ Անտարիւն արեւելեան քաղաքականութիւնն անփոփոխ մնացած է :

Լոնտոն 21 սեպտ.

Օսմ. Բոսն.	40
Փոթ.	1865 40 1/2
"	1869 40 1/8
"	1871 39
"	1872 18
"	1873 40
Եղիպտ.	59
Անգլ. Բոսն.	95 3/4

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրահանգ

Բ. Գրան առաջին թարգման Միւնիւնիւր Երկրորդ Ժողովին անդամ անուանեցաւ՝ առաջին պաշտօնն ալ վրան մնալով :

Երբեմն Ֆրիդլանդի կառավարիչ Ա. զիգ փաշան Արիւնիկեան Տրիպոլիոյ կառավարիչ անուանեցաւ :

Երբեմն Նախարարութեան խորհրդոյ անդամ Ասիմ փաշան Շէհրի-Քէօյի կառավարիչ անուանեցաւ :

Սինոպի կառավարիչ Արիֆ փաշան Գըրլէհիւրի կառավարիչ անուանեցաւ :

Միտիլիի կառավարիչ Հասան փաշան Փիտի կառավարիչ անուանեցաւ :

Նիքոսի կառավարիչ Հասան Թաֆ-սին փաշան Հոսէյյապի կառավարիչ անուանեցաւ :

Կարնոյ վիլայէթին Տէֆէթիտար և կուսակալի տեղապահ Ա. Բիֆ Էֆէնտիլին իւրայի առաջին աստիճան տրուեցաւ :

Հինգշաբթի օրը Վեհ. Սուլթանը Տոյմա-Պահաճի պալատն երթալով Ա. Էրստրո—Հոնդարական դեսպանին այցելութիւնն ընդունեց :

Չորեքշաբթի և հինգշաբթի օրերը տան վաղա զօրք ճանաչելու մտաւրաբար Արիւնիկեան ժողովին երկաթուղով :

Պաթմա մէջ եկող պետական շոգե-նաւ մը տան Ռուս զօրական դերի բերաւ որք Վրացի Հայեր են : Յիշեալ դերիները Սպարապետի դուռը տարուեցան :

Երբեմն Նախարարը Ղալաթիոյ գլխաւոր սեղանաւորացի մի քանիին հետ երեքշաբթի օրը Միւնիւնիւր քաղաքի երթալով՝ երթալու խնդրոց վրայ խորհրդակցեցան :

Սթամբուլ լրագիրը կը ծանուցանէ թէ Վեհ. Օսման Գ. Էֆէնտիլին փարիզէն ճանաչելու ելելով Կ. Պոլիս կը վերադառնայ :

Բէիքի Չաֆէր անուն հին կրկնա-յարկ պատերազմանաւ՝ որ ներսի նաւահանգստին մէջ էր, Խալը քէօզ-կիի մօտ բերուեցաւ՝ իբրեւ հիւանդանոց գործածուելու համար, և կը հաշուեն թէ 1300—1500 հիւանդ և վիրաւոր կրնայ պարուենակել :

Կիւմուշ Սուլի զօրանոցն ալ նոյն պէս զինուորական հիւանդանոցի փոխարկուելով մէջը ընկող զօրացմէկ մասը Նիշան թաշիի մօտ գտնուող մեծ պահականոցը պիտի փոխադրուին, միւս մասն ալ Տոյմա Պահաճի պալատին սպասաւորաց յատկացեալ շէնքերուն մէջ :

Քաղաքային պահապան զօրաց կազմութեանը նախագահող յանձնախումբին որոշեց որ Կ. Պոլսոյ զօրքերն Հանրի Մարթինի հրացան կը-րեն, Հետեւաբար յիշեալ հրաշէն-

ները Կ. Պոլսոյ և շրջակայից զանա-զան թաղերու պահականոցներուն տրուեցան : Յայտնի է որ քաղաքային պահապան զինուորները՝ զինուո-րական վարժութեանը ժամանակ միայն զէնք պիտի ունենան : Իսկ վարժութիւններէն ևս զէնքերը պահականոցներուն մէջ պիտի մնան :

Հաքիքէթ լրագիրը կը ծանուցա-թէ մայրաքաղաքի մէջ մինչև հիմա կազմուած քաղաքային պահապան զօրաց փաշտեւուն թիւը 24 ի հասած է, և իւրաքանչիւրն 700—850 մարդէ կը բաղկանայ :

Ռուսաց Պաշտաներէն անցած ժամանակ Սիմիոնի կառավարիչ Բէֆի Էֆէնտիլին, նոյն քաղաքի ոստի-կանութեան զօրաց գլուխն և չու-խայի գործարանին տնօրէնը, Ռուսաց մօտեմալը լսելուն պէս թողած փախած ըլլալուն պատճառաւ, առաջինը տարի ու կէս, միւսներն մէկ մէկ տարի բանտարկութեան դատա-պարտեցան :

Եանպօլի փառապիտա զայմագա-մէն ալ՝ Բէֆէթ Կէյ, նոյնպէս պա-տարազմական տառանքն դատուելով տան տարի Արքայի բերդն աքսոր-ւելու դատապարտեցաւ :

Բերայի ոստիկանութիւնը կնդ թղթագրած շինող ընկերութիւնն մը ձեռք ձգեց իր կողմ հողի բաժնուեցան, մինչև և միւսը Յոյն, Այս վերջ-նոյն տան մէջ ոստիկանութիւնը խել մը հինգնոց կնդ թղթագրածներ և զանոնք շինելու գործինը դադար-կը յուսացուի որ ընկերութիւն ըլլալով միւս գործակիցներն ալ երեւան կել-նեն :

Երեքշաբթի առաւօտ Բերա Ա. Էրստրի թղթատան փողոցին մէջ 18 տարեկան Հայ երիտասարդ մը՝ բարձր տան մը պատուհաններէն դուրս բարձրացած փառարանի խոզ-վակն անցնելով ժամանակ սահելով վար ինկաւ և գլուխը ջախջախելով անմիջապէս մեռաւ :

Չորեքշաբթի օրն իւսկիւտար Շէմ-սի փաշայի ծովեզերքը տան տարե-կանի չափ Յոյն տղայ մը դիպուածով ծովը ինկաւ և հոսանքէն քուլելով խեղդուելու վրայ էր խեղճ մօրն աչ-քին առջև : Որոյ աղիկուտը Տիշը լսելով Հաֆէթ Ահմէտ Էֆէնտի անուն Օսմանցի քաղաքային զինուոր մը, իսկոյն ծովը նետուեցաւ առանց իսկ զգեստն հանելու և յաջողեցաւ աք-դան աղատել ալիքներուն մէջէն, ուրոց ներքեւ ի սպառ խորտակուելու վրայ էր :

Ռոտիկանութեան նախարարն իւս-կիւտարու կառավարչին առաջար-կութեամբ շքադրամ մը նուիրեց յիշեալ քաջ և արիւնասիրտ Օսմանց-ւոյն :

Էնկիւլիէն սեպտ. 6 թուով նամակ մը կը ծանուցանէ թէ 75 բանտարկ-ւալք՝ բանտին դուռը կտրելով և պահապան զինուորաց զէնքերն առ-նելով փախել են :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍՆԱՄԸ ՈՒՄՈՒՄ ԻՆ	
9 սեպտ. ուրբաթ իրիկուն	10,27
10 սեպտ. շաբաթ առաւօտ	
բացուեցաւ	10,28
ժամ 6 ին	10,30
Բուսիլի երկաթուղի	Ֆր. 31 75
Թղթագրամ	Լր. 180

ԸՆԹԱՅԻՐ ԱՐԺԵԹՂՈՅ	
Կ. Պոլիս 9 սեպտեմբեր	
Ստիլթէ Զէնկալի բաժ. Անգլ. լր.	3, 8
Փոխանակութեան	4,25
Կ. Պոլսոյ Պաշտային	3, 5
Քրէտի Զէնկալ	3, 2
Քրէտի Օսթրո—Թուրք	—

Փոթ.	1863	Ֆր.	53
"	1865	"	53
"	1869	"	49
"	1872	"	47 25
"	1873	"	48
Խրատաց		Օսմ. լր.	4 74

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ

Երբեք աղիւյսի վարչութեան խառն ժողովը գումարուելով՝ ի մէջ այլոց հետեւեալ որոշման քննարկ :

1. Ռուս միակն խորհուրդը Գում-գափուի (Մայր դպրոցը կեդրոնական վարժարան ընելու առաջարկութիւն ներկայացուցած ըլլալով, խառն ժո-ղովը ոչին առաջարկութիւնն իբրեւ դատարարութեան խնդրոյն յարա-կից՝ ազգային ժողովոյ ներկայացը-նել որոշեց :

2. Լրագրոյ և Նոր Գարու խմբա-գիրներն հրատարակելով պատուէր գրուեցաւ որ ազգային դպրոց յօ-ւածներ չհրատարակեն, որպէս զի պաշտօնականութեան ներքեւ չի-նան ներկայ փափուի պարագայից մէջ :

3. Երկնային նորընտիր առաջնորդ-գեր. Ներսէս վարդապետ Աստուհան հրաժարական տուած ըլլալով, տեղն ուրիշ մը ընտրուելու հրահանգ դրոյնե-ցաւ յերկնային :

Լրագրոյ չորեքշաբթի առաւ թը-ւոյն մէջ գանգատ մը կայ լրագրոյ խմբագրութեան դէմ, իբր թէ Լը-րագրոյ բշի և գշի առաւ թերթե-րուն մէջ հրատարակուելու մը աղ-գային կարեւոր լուրերն իրմէ առնը-լով հրատարակել ենք, առանց ուր-կէ առնելին ծանուցանելու :

Այս գանգատը բնաւ տեղի չու-նի, Այն լուրերը Գափամաճեան Մի-նա Էֆէնտիլին բերած էր մեզ, նոյն աղբիւրներէն քաղելով, որոցմէ Լը-րագրոյ խմբագիրն ալ քաղել է ան-շուշտ :

Եթէ այս տեսակ գանգատ մը-նեւ իրաւունք ունեցող մէկը կայ, այն ալ մեք ենք, որովհետեւ մեր ըրած թարգմանութիւնները շատ անգամ նոյնութեամբ կը հրատարակ-ւին լրագրաց ոմանց՝ մանաւանդ Նոր Գարու մէջ՝ առանց ուրիշ առնուած ըլլան յիշուելու, բայց և այնպէս վեհանաճար լուծ ենք :

Յունաց Պատրիարքն հիւանդ ըլ-լալով, իւր կողմէ երկու արքեպիսկո-պոս և երեք պատուաւոր աշխարհա-կան զրկեր էր երեքշաբթի օրը մեր Պատրիարքարանը, Ս. Պատրիարքին Օսմանիէ պատուանշան ստանալը շնոր-հաւորելու, իմացնելով որ առողջա-նալուն պէս անձամբ ալ պիտի գայ :

Իզմիրի Արշալոյս լրագրին սեպտ. 3 թուոյն մէջ հետեւեալ կը կար-դանք :

« Սթամբուլեան մահաւոր Յակոբ Էֆէնտի և մահաւոր Բօհանէս Էֆէն-տի վեհ. եղբարք՝ յողգասիրական վեհ զգացմանց շարժեալ, սկիզբն ա-րարին շինութեան ազգային հիւանդ-անոցին քաղաքին՝ որ յայժ փոք-րիկ էր և ի խախտու վիճակի կը դա-նուէր, իսկ այժմ, ինչպէս կը հաւաս-տեն մեզ, նոյնն ծախելք ի հիմանց փլուելով՝ երկայարկ հոյակապ շէնք մի պիտի կառուցուի՝ բաղկացեալ 30 սենեկաց :

« Սթամբուլ և մեզ յուսալ թէ այս բա-րեգործական մեծ շինութիւնն՝ բայց ի նախանձաւորութեան բարի օրինակ լինելոյ ազգային երեւելի քաղաքակ-ցաց մերոց, սկիզբնաւորութիւնն պի-տի լինի ազգասիրական ուրիշ գլխա-

ւոր շինութեանց զորս վեհաշուք ըմ-բարթալեան կղաքք միտք ունին ընելու ի փառս Աստուծոյ և յօգուտ ազգին :

« Այս պիտի Սթամբուլեան Արշալոյսն իբրեւ թարգման երախտագէտ ըզ-գացմանց ջանքերից Հայ ժողովրդե-րան, իւր խորին շնորհակալքն կը յայտնէ յիշեալ ազգային բարեբա-րաց, և կը բարեմաղթէ որ նոցա բարեգործական ուրիշ գլխաւորու-թիւնքն ևս կարճ ապագայի մը մէջ ի գործ դրուին ի պարծանս և ի յա-ւիտենական յիշատակ Սթամբուլեան դերբաստանին : Յիշեալ խմբագրու-էֆէնտիլներն՝ արդէն ընդհանուր մարդասիրութեան ոգիէ շարժեալ բոլոր ազգաց օգտակար և տէրու-թեան շահուցն նպատաւոր գլխա-ւոր բարեգործութիւն մի ըրած են, այն է Պաճա գիւղին կառագնաց ճա-նապարհին հաստատուն շինութիւնն, որոյ համար լուծուած սոսկայեով, հետ-դէտէ 6—7 հարիւր հազար զուրուշ ծախք ըրած են ի միջոյն մի քանի ամաց : »

... Խմբագիր Մատիս լրագրոյ .

Ռուս միտարած ընկերութեան ան-րէն ժողովը պատիւ ունի ծանուցանել, որ երեք ամիսէ ի վեր իւսկիւտարու Ս. Խաչ եկեղեցւոյ վարժարանին մէջ ձրեա-բար կառանդուին հետեւեալ ուսումները . Հայերէն, Պարսկերէն, Տաճկերէն, Թը-ւարանութիւն, Տոմարակալութիւն և Աշ-խարհագրութիւն :

Տնօրէն ժողովը կը յուսայ որ ուսում-նասէր Հայ հասարակութիւնը պիտի փու-թայ այս հրաւերին ի պատասխան վերո-յիշեալ վարժարանը դիմել և իւր յարա-տուութեամբ քաջակերել ընկերութեանս այս ազգասիրական ձեռնարկը, յորմէ ար-դէն օգուտ կը քաղեն քանիսն աւելի ա-մեն հասակի ուսանողք :

Ընդունեցէք, ահա, այս առթիւ մեր խորին յարգանքաց հաւատարմ, որով մնամ

Ի գիմաց Տնօրէն ժողովոյ
Խսկիւտար Ատենապետ
7 սեպտ. 1877 Գ. Զատիւն

Ը.Օ.Դ

ՌՈՒՐԻՆԵԱՆ ԳԻՇԵՐՈՒԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՆ
ԵՐԿՍԵՒՆՆ ԿԱՐԴԱՐԱՆ

Ռուս բնիկան վարժարանի պարա-պոյ օրերը լրացած ըլլալով՝ ներկայ ամսոյս 5 էն սկսեալ բացուած է :

Գաւախօսութիւնք պիտի սկսին սեպտեմբեր 13 երեքշաբթի օրէն . վարժարանին Տեսչութիւնը փոխաճ է որ պատուարժան ծնողք պիտի հա-ճին իրենց որդիքը ըստ առաջնոյն յանձնել յաշակերտութիւն դպրոց-ցիս :

Նոր աշակերտ և աշակերտուհի տալու փախաքոյ ծնողք կը հրաւիր-ուին տեսնուիլ Տնօրէնութեան հետ՝ այս օրէն սկսեալ հինգշաբթի և կիւ-րակէ օրերը մինչև կէս օր ի Ղալա-թիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վար-դապետարանը, միւս օրերը Բերա-Բանկալթի ճէտիկային փողոց թիւ 35 Ռուս բնիկան վարժարանի մէջ :

Վարժարանին Տեսչութիւնը կա-պահովէ զորդեանք ծնողս որ ուսա-նողաց յառաջադիմութեան և հան-գըտին համար ամեն խնամք և ջանք ի գործ կը դրուին :

Վարժարանին ուսմանց յայտադ-րին և ընդունելութեան պայմանե-րու մասին Արքայ հասարակութեան ի մօտոյ առանձին յայտարարու-թեամբ ընդարձակ տեղեկութիւնք պիտի տրուին :

1877 սեպտ. 5 Տէր և վերատեսուչ Բերա-Բանկալթի Ռ. վարժարանի Ա. Բերա-Բանկալթի Ռ. վարժարանի




ՍՈՒԹԻՆԿ ՇԻՐՈՐ

Յայտնի է որ երախայք ծնանելէն մինչ երեք տարեկան հասակը դրեթէ չարունակ փորի ցաւ . փորհարու թիւն, ստամոքսի անհանգստութիւն, անքուն մնալ, չղային գրգռութիւն և այլն կունենան, մանաւանդ ահուհասնելու միջոցին, և այս ներդութիւններն ալ աւելի կը ստատկանան ամառւան տաք եղանակին : Սուրինկ Շիրօքը վերայիշեալ դժուարութեանց աւանդելու ալ առաջը կառնէ ու կը բըծըլկէ, որով երախան կը հանգչի ու կը զօրանայ, յուրախութիւն մեծ լիւր ծնողաց : Գործածողները շատ գոհ են : Ուղղող կրնայ փորձել . դինն աւանդէ . նորածին երախայից կաթիլով կը տրուի, վեց ամիսէն վեր երգչին օրը երեք անգլի դրգալ . կը ծախուի Կ. Պօլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղաղան :




ԿԱՐԻ ԳՈՐԾԻՔ

Փոքր «վանձէր» կոչուած ձեռքով դարձող ու անքակ կար կարող գործիքը ամեն տեսակ կար մեծ դիւրութեամբ կը կարէ ու գինն ալ աւանդէ, երախաներու թեմա կը տրուի, աւրուածները կը շախուի ու կարել չգիտողին դաս կը տրուի . կը ծախուի Կ. Պօլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղաղան :



ՋՐԱՆ

Ամերիկայի ջրհաններ մեծ և փոքր, երկաթէ հաստատուն խողովակներով թէ ջրշնչներու և թէ խորունկ հորերու համար աւանդներով կը ծախուի Կ. Պօլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղաղան :



ՇԻՐԻԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱԽՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1877 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1 ՀԻՆԴՇԱՐԹԻ ՕՐԷՆ ՍԿԱՆԼ

ՄԻՆՁԵՒ ՍԵՊՏԵՄԲԵՐ 30

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱԽՆԵՐԸ

Ժամ

Իւրեւրէն Էլնոլ շոգենաւերը

- 12 30 Ենթանալէն, Պէյլեք . Թարապ . Ենթ . Սթէն . Էմրիկ . Բ . Հիսար, Պէյլեք, Արնալ . Օրթաք . Պէյլեք :
- 12 30 Արնալուտեքայէն, Գուրուչ . Օրթաք . Պէյլեք . Գապաթ . 12 30 Պէյլեք . Պէյլեք, Բաշապ . Գանլ . Ա . Հիսար, Գանտ . Վանիք . Չէնկ . Պէյլ . Գուրուչ :
- 2 Ենթանալ . Մէյլապ . Պէյլեք . Թարապ . Ենթ . Էմրիկ . Բ . Հիսար, Պէյլեք, Արնալուտ . Գուրուչ . Օրթաք . Պէյլեք :
- 2 15 Պէյլեք, Բաշապ . Գանլ . Ա . Հիսար, Գանտ . Վանիք . Չէնկ . Պէյլ . Գուրուչ . Գապաթալ :
- 3 15 Բ . Ա . Գապաթէն, Ենթ . Մէյլապ . Պէյլեք . Թարապ . Ենթ . Էմրիկ . Բ . Հիսար, Պէյլեք, Արնալ . Գուրուչէն, Օրթաք . Պէյլեք :
- 4 30 Պէյլեք . Գուրուչ . Թարապ . Պէյլեք, Բաշապ . Բիթաթ . Գանլ . Գանլ . Ա . Հիսար, Գանտ . Վանիք . Չէնկ . Պէյլ . Գուրուչ . Գապաթալ :
- 5 Ենթ . Մէյլապ . Պէյլեք . Թարապ . Ենթ . Սթէն . Էմրիկ . Պայա . Բ . Հիսար, Պէյլեք, Արնալ . Գուրուչ . Օրթաք . Պէյլեք :
- 6 30 Ենթ . Պէյլեք . Թարապ . Պէյլեք, Ենթ . Էմրիկ . Գանլ . Բ . Ա . Հիսար, Գանտ . Արնալ . Չէնկ . Պէյլ . Օրթաք . Գուրուչ . Պէյլեք . Իսկիւտար :
- 8 15 Ա . Բ . Գապաթէն, Մէյլապ . Պէյլեք . Թարապ . Պէյլեք, Ենթ . Սթէն . Պայա . Բ . Հիսար, Արնալուտ . Գուրուչ . Օրթաքէն, Պէյլեք :
- 8 30 Պէյլեք, Պէյլեք, Բաշապ . Գանլ . Ա . Հիսար, Վանիք . Չէնկ . Պէյլ . Գուրուչ . Իսկ :
- 9 45 Ենթանալ . Պէյլեք . Թարապ . Ենթ . Էմրիկ . Բ . Հիսար, Պէյլեք, Արնալ . Օրթաք . Պէյլեք :
- 10 45 Արնալուտեքայէն ուղղակի կամուրջ :
- 11 Մէյլապ . Պէյլեք . Թարապ . Ենթ . Էմրիկ . Արնալ . Օրթաք . Պէյլեք :

Կառնալէն Էլնոլ շոգենաւերը

- 2 Պէյլեք, Օրթաք . Գուրուչ . Արնալ . Պէյլեք, Բ . Հիսար, Պայա . Ենթ . Թարապ . Պէյլեք :
- 1 45 Գապաթալ . Իսկ . Պէյլեք . Գուրուչ . Օրթաք . Պէյլեք, Արնալ . Գանլ . Ա . Հիսար, Գանտ . Էմրիկ . Ենթ . Պէյլեք, Թարապ . Պէյլեք . Ենթանալ :

- 3 15 Պէյլեք, Օրթաք . Արնալ . Պէյլեք, Բ . Հիսար, Էմրիկէն, Սթէն . Ենթէն, Թարապ . Պէյլեք . Մէյլապ . Ենթանալ :
- 4 Իսկիւտար, Գուրուչ . Պէյլեք . Չէնկ . Վանիք . Գանտ . Ա . Հիսար, Գանլ . Բ . Գապաթ . Բաշապ . Պէյլեք . Պէյլեք :
- 5 Պէյլեք, Օրթաք . Արնալ . Բ . Հիսար, Էմրիկէն, Ենթ . Պէյլեք, Թարապ . Պէյլեք . Մէյլապ . Բ . Ա . Գապաթ :
- 6 45 Իսկիւտար, Պէյլեք . Գուրուչ . Օրթաք . Պէյլեք, Բ . Հիսար, Էմրիկ . Ենթ . Թարապ . Պէյլեք . Պէյլեք, Թարապ . Պէյլեք . Ենթանալ . Պէյլեք :
- 8 45 Պէյլեք, Օրթաք . Արնալ . Բ . Հիսար, Պայա . Ենթ . Թարապ . Պէյլեք . Մէյլապ . Ենթանալ :
- 9 30 Գապաթալ, Պէյլեք, Օրթաքէն, Գուրուչէն, Արնալ . 10 30 Պէյլեք, Օրթաք . Արնալ . Պէյլեք, Բ . Հիսար, Էմրիկէն, Ենթ . Թարապ . Պէյլեք . Մէյլապ . Ենթանալ . Գապաթալ :
- 10 30 Գուրուչուտեք, Պէյլեք . Չէնկ . Վանիք . Գանտ . Ա . Հիսար, Գանլ . Բ . Գապաթ . Բաշապ . Պէյլեք, Թարապ . Պէյլեք :
- 11 Պէյլեք, Օրթաք . Գուրուչ . Արնալ . Պէյլեք, Բ . Հիսար, Էմրիկէն, Սթէն . Ենթ . Թարապ . Գուրուչ . Պէյլեք :
- 11 Գապաթալ, Գուրուչ . Պէյլեք . Չէնկ . Վանիք . Ա . Հիսար, Գանլ . Բաշապ . Պէյլեք :
- 11 35 Պէյլեք, Գուրուչ . Օրթաք . Պէյլեք . Չէնկ . Արնալ . 12 Պէյլեք, Օրթաք . Գուրուչ . Արնալ :

ԻՍԿԻՒՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱԽՆԵՐԸ

Իւրեւրէն	Կառնալ	Կառնալ	Կառնալ
Ժամ	Ժամ	Ժամ	Ժամ
12 30	6 5	12 45	6 25
1	6 45	1 40	8
4 30	8 15	1 45	8 30
2	8 45	2 40	9 5
2 30	9 15	2 40	9 30
3	9 45	3 45	10
3 30	10 5	3 45	10 25
4	10 25	4 40	10 50
4 30	10 50	4 45	11 10
5	11 15	5 40	11 30
5 30	11 30	5 50	11 40
	12		12 5

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Իւրեւրէն	Կառնալ	Կառնալ	Կառնալ
Ժամ	Ժամ	Ժամ	Ժամ
1	6 45	1	6 45
1 45	8	1 45	8
2 15	8 40	2 15	8 45
3	9 20	3	9 20
3 40	10	3 40	10
4 25	10 30	4 25	10 35
5 5	11	5 5	11 5
5 40	11 30	5 40	11 35
6 15	12	6 15	12 5



ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ 16600 ՖՐԱՆԿ

ՄԵԾ ՈՍԿԻ ՇՔԱԴՐԱՄ ԱՌԹ. ԼԱՐՈՇ

Եւ շաբաթ 1875 թ. Փաբլի արտադրութիւն



ԷԼԻՔՍԻՐ

ԵՐԵՎԱՆԻ ՖԷԼԵԴԵՆԱՅԻՆ ՍՄԵՆ ՍԿԱՆԼԱՆԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ

Բինա Լարոշ խիստ անորժահամ էլիքսիւր մ'է, որոյ քէնքինայի գինիներէն ու շուրուաներէն ունեցած մեծ գերազանցութիւնը բան տարիէ 'ի վեր հաստատուած է, ուժի տկարութեան, ստամոքսի հիւանդութեանց, հին ջերմերու և այլոց դէմ :

Փարիզ Տրուօ փողոց 22 և ամեն դեղափաճառաց ըով :

Նոյն Երկրորդութիւնը, այսինքն երկաթային աղի մը քէնքինայի հետ բաղադրութիւն, որ արեան նուազութեան, փրօթանքի, ծնողաբերութեան հետեւանաց և այլոց դէմ կ'ապաւորուի :

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻԹԻԹԻՃԵԱՆ

ՀՐԴԵԶԻ ԳԵՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE INSURANCE COMPANY

ՆՕՐԹ ԲՐԻԹԻՇ ԵՆՏ ՄԵՐԿԵՆԹԻԼ ԻՆՍՈՐԱՆՍ ԿՈՒՊԻ

Բաժանորդագրեալ գումար շ. 2,000,000
Վճարեալ գումար շ. 250,000
Պահեստի գումար շ. 1,040,744-1,290,744
1875 թ. հրդեհի դուռ հասցի 917,173

Ստորագրեալ իրենց բաղաձայն յաճախորդաց և այս քաղաքի ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն որ իրենց վերայի ալ երկու ընկերութեանց միացեալ գործակալութիւնը ընտրուած ըլլալով, այնպիսի գումարներ մը մէջ կը գտնուին, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանեն :

Ապահովութեան կարողութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց զ համեմատական բաժանում մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալով, ընկերութիւնն ալ կրնայ աւելի մեծադուստր ապահովութիւն բռնողներու ինքզինքն շնորհակցանել :

Գրեթէ ամեն կարգի փառնաւոր ապահովութիւնը կրնան ընդունուի ինչպէս Բերայի Ղալաթիոյ և Պօլսոյ մէջ, նոյնպէս մատակց քաղաքները գիւղերը և գաւառները :

Գիններուն և տւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Միացեալ ընկերութեանց գրասենեակը Ղալաթիոյ Բէրլինգ քաղաքի մօտ Կալաթի իսան թիւ 8 :

NORTHERN ASSURANCE COMPANY

ՆՕՐԹ ԶԵՐՆ ԼՆԻՍՈՐԱՆՍ ԿՈՒՊԻ

Բաժանորդագրեալ գումար շ. 3,000,000
Վճարեալ գումար շ. 150,000
Պահեստի գումար շ. 380,000-550,000
1875 թ. հրդեհի դուռ հասցի 351,000

Ստորագրեալ իրենց բաղաձայն յաճախորդաց և այս քաղաքի ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն որ իրենց վերայի ալ երկու ընկերութեանց միացեալ գործակալութիւնը ընտրուած ըլլալով, այնպիսի գումարներ մը մէջ կը գտնուին, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանեն :

Ապահովութեան կարողութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց զ համեմատական բաժանում մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալով, ընկերութիւնն ալ կրնայ աւելի մեծադուստր ապահովութիւն բռնողներու ինքզինքն շնորհակցանել :

Գրեթէ ամեն կարգի փառնաւոր ապահովութիւնը կրնան ընդունուի ինչպէս Բերայի Ղալաթիոյ և Պօլսոյ մէջ, նոյնպէս մատակց քաղաքները գիւղերը և գաւառները :

Գիններուն և տւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Միացեալ ընկերութեանց գրասենեակը Ղալաթիոյ Բէրլինգ քաղաքի մօտ Կալաթի իսան թիւ 8 :